րին եւ նրանց օգնութեամբ խլում էին միմեանցից վանքեր, տիրում էին թեմերի: Այսպիսի յափշտակութիւնները խիստ թանկ էին նստում: Վանահայրը կամ առաջնորդը գրաւ էր դնում վանքի սրբութիւնները, պարտք էր անում իր խոստացած կաշառքը վճարելու համար: Բայց ո՞վ էր թափում գրաւները:
— Դարձեալ ժողովուրդը:

Ես յիշում եմ մի այսպիսի դէպք, որ պատահեց իմ ժամանակում: Վանայ ծովակի կղզիներից մէկում գտնւում էր Աղթամարայ անապատը. այնտեղ նստում էին կաթողիկոսներ, որոնց մէկը իր կողմը ձգելով Շատախու, միւսը Սասնոյ կիսավայրենի հայ լեռնականներին, անդադար միմեանց ձեռքից խլում էին հայրապետական աթոռը: Այսպիսով ծագել էր ժողովրդի մէջ երկու կուսակցութիւններ, եւ խռովութիւնը հասաւ մինչեւ արիւնահեղութեան: Կաթողիկոսներից մէկը տարաւ յաղթութիւնը քուրդ իշխանի օգնութեամբ: Պաշտպանութիւնը արժեց նրան մի քանի տասնեակ «քիսա» արծաթի, որը նա պարտք առաւ, ի հարկէ, ամենաապահով գրաւականով՝ վանքի սրբազան սպասներով: Հաստատելով իր աթոռի վրայ, նորին վեհափառութիւնը ուզեց թափել գրաւականները, եւ այս նպատակով պատրաստեց նա նոիրակների մի խումբ, որ գնացին թեմերից ժողովք անելու: Միաբաններից մի ծերունի աբեղայ առաջարկեց, թէ նա կարող էր նոյնիսկ վանքից գոյացնել ցանկացած գումարը, եթէ նորին վեհափառութիւնը կ'ընդունէր իր տոած խորհուրդը: Կաթողիկոսը մի օր բոլոր աբեղաներին կանչեց իր մօտ ճաշի, հացկերոյթը վերջանալեն յետոյ հրամայեց փակել նրանց նոյնիսկ սեղանատան մէջ: Յետոյ ինքը վեհափառը, մտնելով աբեղաների խուցերը, բաց անել տուաւ «աշխարհից հրաժարոածէ աբեղաների փոքրիկ արկղիկները, եւ յիրաւի, յայտնոեցան աւելի քան կաթողիկոսի ցանկացած գումարը ոսկի եւ արծաթ: Ո՞վ կը կարծէր, որ աշխարհի հարստութիւնից հրաժարոած ճգնաւորները, — որոնք իրանց վանքում կին ուխտաւորներ չէին ընդունում, որոնք հագնում էին կոշտ մազից զգեստներ, որոնք մերկ ոտքերով էին ման գալիս, որոնք աղ ու հացով էին կերակրւում, որոնք արծաթից այնպէս էին վախենում, որպէս դեւից, — ունենային իրանց սնդուկների մէջ այնքան ոսկու եւ արծաթի մթերք:

Ծերունի աբեղայի հնարագիտութիւնը, որ երեւան հանեց այս գաղտնիքը, վարձատրոեցաւ նրանով, որ քանի օրից յետոյ գտան նրա խեղդոած դիակը ծովակի ափում....

Չնայելով, որ վանքերում այսպիսի եղեռնագործութիւններ էին պատահում, դարձեալ ժողովրդի ջերմեռանդութիւնը դէպի իր սուրբ աթոռները մնում էր տաք եւ իր բոլոր բարեպաշտական ոգեւորութեան մէջ: Նա ինքը,